ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԷՋԻ ԽՄԲԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/13

ք. Երևան «10» ապրիլի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա «Գնորդ», մի կողմից, և <<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Դաքեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համացանցային էջի խմբագրման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3290000 (երեք միլիոն երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	<<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3	ք. Երևան,Բաղրամյան 2-րդ նրբանցք 15 տուն
Կենտրոնական Գանձապետարան	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011018703	Հ/Հ 15700262042301000
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 00166341
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72211139/1	այսիթիստատ.ամ (ictstat.am) կայքի պատրաստում և սպասարկում	դրամ	3290000	1		պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառման օրվանից 3 ամիս

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Համացանցային էջի խմբագրման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայության

1. Ներածություն

1.1. Պահանջների համառոտ նկարագրություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում առկա մարտահրավերների բացահայտման, ոլորտի հետագա զարգացման քաղաքականության մշակման, ինչպես նաև ոլորտում հետազոտությունների, վերլուծությունների ու կանխատեսումների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ՏՏ ոլորտի ընկերություններից տվյալների և տեղեկությունների հավաքագրման և ստացված տվյալների մշակման հնարավորություն:

1.2. Առաջարկ

Ուսումնասիրելով գործող ictstat.am վեբ կայքը և վերլուծելով առկա հնարավորություններն ու թերությունները առաջարկվում է պատրաստել նոր վեբ կայք, որը բաղկացած կլինի գլխավոր (տեղեկատվական) և ադմինիստրատիվ բաժիններից:

Տեղեկատվական բաժինը կպարունակի տեղեկատվություն կայքի նպատակների և կատարվող աշխատանքների վերաբերյալ (ներառյալ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները), կապահովի կապ նախարարության աշխատակազմի և կայքի այցելուների միջև, ինչպես նաև հնարավորություն կտա համակարգում գրանցվել և կառավարել կազմակերպության հաշիվները (company account): Իսկ նախարարության աշխատակիցները հնարավորություն կունենան դիտել կազմակերպությունների մուտքագրած հաշվետվությունները, վերլուծություններ կատարել և ամփոփիչ հաշվետվություններ կազմել:

Ադմինիստրատիվ բաժինը բաղկացած կլինի երկու մասից՝ գրանցված կազմակերպությունների կողմից օգտագործման, և նախարարության աշխատակիցների կողմից օգտագործման համար:

Համակարգում գրանցված Օգտատերերը (կազմակերպությունները) հնարավորություն կունենան համակարգ մուտք գործելուց հետո դիտել, ավելացնել և թարմացնել իրենց կազմակերպությունների տվյալները, գրանցել նոր կազմակերպություն, հեռացնել գրանցած կազմակերպություն(ներ)ը, ավելացնել իրենց ծավալած գործունեության վերաբերյալ ամսեկան հաշվետվություններ, ինչպես նաև դիտել և խմբագրել նախկինում տեղադրված հաշվետվությունները:

Նախարարության աշխատակազմը հնարավորություն կունենա համակարգ մուտք գործելուց հետո դիտել գրանցված կազմակերպությունների ցանկը և նրանց տվյալները, ինչպես նաև հնարավորություն կունենա դիտել մուտքագրված հաշվետվությունները և դրանց հիման վրա կատարել վերլուծություններ:

2. Առաջարկվող ictstat.am նոր վեբ-կայքի նկարագրությունը

2.1. Գլխավոր էջ

Առաջարկվում է ***Գլխավոր*** էջին ունենալ հետևյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով.

Գլխամասում

- Լոգո:
- Գրաֆիկական վահանակ (banner)՝ ըստ ցանկության
- Հետևյալ բաժիններից բաղկացած հիմնական մենյու՝
  - Գլխավոր
  - Ծրագրի մասին
  - ՏՀՏ Ռեգիստր
  - Փաստաթղթեր (Օրենսդրություն, Հաշվետվություններ)
  - Հետադարձ Կապ
  - Մուտք/Գրանցում

Հիմնական մասում

- Հիմնական մասում առաջարկվում է տեղադրել ոլորտում տեղի ունեցող անցուդարձի մասին տեղեկատվություն (**Նորությունների** բաժին), ինչպես նաև տեղեկություններ սպասվող իրադարձությունների մասին:
- Կայքը գրավիչ դարձնելու համար առաջարկվում է նաև տեղադրել համառոտ տեսաշարեր ոլորտի հաջողակ ընկերությունների մասին:

Ստորին հատված

- Գործընկեր կազմակերպությունների լոգոները և հղումներ դեպի այդ կազմակերպությունների վեբ-կայքեր
- Հղումներ դեպի նախարարության՝ սոցիալական կայքերում տեղադրված էջեր
- Հեղինակային իրավունքների վերաբերյալ տեղեկություն

2.2. Բաժիններ

Տեղեկատվական մաս

Ծրագրի մասին

Այս բաժինը նախատեսված է լինելու ծրագրի, նրա նպատակների ու կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ստանալու համար:

ՏՀՏ Ռեգիստր

Այս բաժինը պետք է պարունակի ՏՀՏ Ռեգիստրում գրանցված կազմակերպությունների ցանկը:

Բաժինը պետք է ունենա որոնողական համակարգ, որտեղ հնարավոր կլինի որոնել կազմակերպություններն ըստ անվանումների, գործունեության ոլորտի, վայրի կամ նշված բանալի բառերի:

Օգտատերերի կողմից նոր կազմակերպություն գրանցելուց հետո այն ավտոմատ կերպով կհայտնվի ՏՀՏ Ռեգիստրում:

Փաստաթղթեր

Այս բաժինը նախատեսված է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների, վերլուծությունների և կանխատեսումների հրապարակման համար, ինչպես նաև նախարարության, ՏՀՏ Ռեգիստրի և ոլորտին առնչվող այլ իրավական փաստաթղթերի հրապարակման համար:

Բաժինը պետք է ունենա նշված բոլոր փաստաթղթերը համակարգչի մեջ ներբեռնելու հնարավորություն:

Հետադարձ կապ

Այս բաժինը նախատեսված է նախարարության կոնտակտային տվյալների և գտնվելու վայրի մասին տեղեկություններ հրապարակելու համար:

Բաժինը կունենա նաև էլեկտրոնային եղանակով նախարարության հետ անմիջապես կայքի միջոցով կապ հաստատելու հնարավորություն:

Մուտք/Գրանցում

Այս բաժինը նախատեսված է արդեն գրանցված Օգտատերերի կայք մուտք գործելու համար, ինչպես նաև, որպես նոր Օգտատեր գրանցվելու համար:

Որպես կազմակերպություն գրանցվելու համար անհրաժեշտ կլինի լրացնել պահանջվող դաշտերը (ՀՎՀՀ, էլ. փոստ, հեռախոսահամար) և հաստատել գրանցվելու ցանկությունը, որից հետո գրանցումն ավարտելու համար պահանջվող քայլերի հաջորդականություն պարունակող հաղորդագրություն կուղարկվի նշված էլ. փոստին:

Որպես նախարարության աշխատակից գրանցվելու համար կառանձնացվի այլ պատուհան, որը հիմնական կայքից հասանելի չի լինի հանրության համար:

Կայք մուտք գործելու համար անհրաժեշտ կլինի որպեսզի Օգտատերն ունենա նույնականացման քարտ և այն կարդացող սարք, ինչպես նաև համակարգչի վրա ունենա ԷԿԵՆԳ ՓԲԸ կողմից տրամադրվող՝ նույնականացման քարտը կարդացող սարքին համապատասխան ծրագրային ապահովում: Ներկայումս նույնականացման համար օգտագործվող ծրագրային ապահովումը հասանելի է միայն Windows Օպերացիոն համակարգի համար, սակայն կայքը պետք է նախագծվի այնպես, որ հետագայում հնարավոր լինի օգտագործել նաև այլ Օպերացիոն համակարգերի և բջջային սարքերի միջոցով:

Ադմինիստրատիվ մաս

Համակարգի ադմինիստրատիվ մասը բաղկացած կլինի երկու էջից՝ նախարարության աշխատակիցների և կազմակերպությունների համար: Ադմինիստրատիվ մասը լինելու է հայալեզու:

Կազմակերպության էջ

Նույնականացում անցնելուց հետո յուրաքանչյուր Օգտատիրոջ համար կբացվի ադմինիստրատիվ էջ:

Բացված ադմինիստրատիվ էջից հասանելի կլինեն հետևյալ բաժինները.

Գլխավոր

Այս բաժնում ընդգրկված կլինի ամփոփ տեղեկատվություն տվյալ Օգտատիրոջ գրանցած կազմակերպությունների և նրանց համար տեղադրված հաշվետվությունների մասին, ինչպես նաև կլինեն հղումներ դեպի առավել մանրամասն տեղեկություններ պարունակող էջեր (գրանցված կազմակերպությունների էջեր կամ հաշվետվությունների էջեր):

Կազմակերպություններ

Այս բաժնում հասանելի կլինի տվյալ Օգտատիրոջ գրանցած կազմակերպությունների ցանկը և նրանց մասին ընդհանուր տեղեկություններ (կազմակերպության անուն, ՀՎՀՀ, հասցե, հեռախոս, կարգավիճակ (ակտիվ/պասիվ), էլ փոստ, և այլն):

Յուրաքանչյուր կազմակերպության համար հնարավոր կլինի դիտել բոլոր լրացված տվյալները (կազմակերպության անուն, ՀՎՀՀ, հասցե, հեռախոս, էլ փոստ, կարգավիճակ (ակտիվ/պասիվ), գործունեության ոլորտ, նկարագրություն, լոգո, բանալի բառեր և այլն), ինչպես նաև խմբագրել դրանք:

Գրանցել նոր կազմակերպություն

Համակարգը նոր կազմակերպություն գրանցելու հնարավորություն կունենա, որի համար անհրաժեշտ կլինի լրացնել առաջարկվող տվյալները և հաստատել:

Նոր կազմակերպություն գրանցելիս, համապատասխան էջում տվյալները լրացնելուց և հաստատելուց հետո, կազմակերպության մասին տեղեկությունները ավտոմատ կերպով կավելացվեն համակարգի տվյալների բազայում, և հասանելի կդառնան տեղեկատվական (գլխավոր) էջից (ՏՀՏ Ռեգիստրում):

Հեռացնել կազմակերպություն

Օգտատերերը հնարավորություն կունենան այս բաժնի միջոցով հեռացնել գրանցած կազմակերպությունները: Հեռացնելու համար անհրաժեշտ կլինի կազմակերպությունների ցանկից ընտրել կազմակերպություն(ներ)ը և համապատասխան կոճակը սեղմելով կազմակերպության հեռացման հայտ ուղարկել նախարարություն: Հայտն ստանալուց հետո նախարարության աշխատակիցը կհաստատի կամ կմերժի հեռացման գործողությունը, որի արդյունքը կծանուցվի Օգտատիրոջը՝ ադմինիստրատիվ էջի *Ծանուցումների* բաժնի միջոցով:

Կազմակերպությունը հեռացնելու դեպքում նրա վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կհեռացվի տվյալների բազայից:

Փոխել կազմակերպության կարգավիճակը

Օգտատերերը հնարավորություն կունենան այս բաժնի միջոցով փոխել կազմակերպության կարգավիճակը՝ դարձնելով այն *Պասիվ* կամ *Ակտիվ*: Կազմակերպության կարգավիճակը *Պասիվ* դարձնելու դեպքում նրա վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կպահպանվի, բայց այն չի հայտնվի ընթացիկ հաշվետու կազմակերպությունների ցանկում, ինչպես նաև չի ստանա ծանուցումներ:

Հաշվետվություններ

Այս բաժնի միջոցով Օգտատերերը կկարողանան ավելացնել ամսեկան հաշվետվություններ, ինչպես նաև դիտել ու խմբագրել նախկինում ավելացրած հաշվետվությունները: Ներկայացված հաշվետվությունները հասանելի կլինեն նաև ներբեռնելու և/կամ տպելու համար:

Հաշվետվությունները խմբավորված կլինեն ըստ կազմակերպությունների, իսկ յուրաքանչյուր կազմակերպության համար ըստ տարիների: Ընտրված յուրաքանչյուր տարվա համար կբացվի նոր էջ, որտեղ խմբավորված կլինեն տվյալ տարվա ամսեկան/տարեկան հաշվետվությունները:

Հաշվետվությունները մուտքագրելիս հնարավոր կլինի դրանք դիտել և անհրաժեշտության դեպքում խմբագրել մինչև վերջնական հաստատելը, իսկ արդեն հաստատված հաշվետվությունները հնարավոր կլինեն խմբագրել մինչև հաջորդ հաշվետվությունն ավելացնելը: Յուրաքանչյուր հաշվետվություն ավելացնելուց հետո,

նախորդ հաշվետվության խմբագրումը հնարավոր կլինի միայն նախարարության կողմից համապատասխան թույլտվության դեպքում, կամ կկատարվի միայն նախարարության կողմից: Նմանատիպ փոփոխություն կատարելու համար Օգտատերերը կկարողանան համակարգի միջոցով հաշվետվության փոփոխման հայտ ուղարկել նախարարությանը:

Ներկայացված հաշվետվությունները թույլատրելի ժամկետներում խմբագրվելու դեպքում նախարարության համապատասխան աշխատակիցները ծանուցում կստանան այդ մասին:

Համակարգը նաև մուտքագրված տվյալները ստուգելու հնարավորություն կունենա: Սխալ կամ կիսատ լրացված դաշտերը կընդգծվեն որպեսզի փոփոխվեն կամ լրացվեն մինչև վերջնական հաստատումը, իսկ այն դաշտերը, որոնց արժեքները նախորդ ամիսների համեմատ նվազած կլինեն, համակարգը կընդգծի՝ արժանացնելով Օգտատիրոջ ուշադրությանը:

Հաշվետվությունների բոլոր այն դաշտերը, որոնք պետք է հաշվարկվեն այլ դաշտերում լրացված տվյալների հիման վրա, ավտոմատ կերպով կհաշվարկվեն համակարգի կողմից և կցուցադրվեն էջի վրա մինչև վերջնական հաստատում կատարելը:

Մուտքագրված հաշվետվությունները կգրանցվեն տվյալների միասնական բազայում, հետագայում դրանց հիման վրա վերլուծություններ կատարելու համար:

Տարեկան հաշվետվությունները կձևավորվեն ծրագրի շնորհիվ ավտոմատ կերպով՝ հիմնվելով մուտքագրված ամսեկան հաշվետվությունների վրա:

Տարեկան հաշվետվությունները կազմվելուց հետո կուղարկվեն կազմակերպություններին կամ դրանք համակարգող Օգտատիրոջը վերանայման և վերջնական հաստատման համար: Կազմակերպության կողմից հաստատում ստանալուց հետո միայն հաշվետվությունները կհրապարակվեն համակարգում:

Ծանուցումներ

Այս բաժնում Օգտատերերը հնարավորություն կունենան տեսնելու համակարգի կողմից արված ծանուցումները: Օգտատերերը կստանան նաև էլեկտրոնային փոստով հաղորդագրություններ ծանուցումներ ունենալու վերաբերյալ:

Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը համակարգը ծանուցում կուղարկի բոլոր Օգտատերերին հաշվետվությունները նշված ժամկետներում ներկայացնելու համար:

Հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում նույնպես համակարգը ծանուցում կուղարկի տվյալ Օգտատիրոջը:

Առաջին անգամ համակարգ մուտք գործելիս Օգտատերը ծանուցում կստանա այն մասին, թե ի՞նչ լրացուցիչ տվյալներ է պետք լրացնել: Լրացուցիչ տվյալների մուտքագրման համար կտրամադրվի համապատասխան ձև (form), որը կիսատ լրացնելու դեպքում Օգտատերը կծանուցվի յուրաքանչյուր հաջորդ մուտքի ժամանակ:

Առաջին անգամ համակարգ մուտք գործող Օգտատերերին նաև կտեղեկացվի Նախարարության կողմից տրամադրվող հավաստագրերի մասին, ինչպես նաև կառաջարկվի համապատասխան ձև (form), որը լրացնելով Օգտատերը կկարողանա հայտ ուղարկել նախարարություն հավաստագրվելու համար:

Օգտատեր

Այս բաժնի միջոցով Օգտատերերը հնարավորություն կունենան փոխելու համակարգ մուտք գործելու համար գրանցված նույնականացման քարտի տվյալները (որի անհրաժեշտությունն առաջանում է այն ժամանակ, երբ համակարգում գրանցված

աշխատակիցը հեռանում է ընկերությունից), ինչպես նաև ստանալ Օգնություն համակարգն օգտագործելու վերաբերյալ և կկարողանա դուրս գալ համակարգից:

Յուրաքանչյուր Օգտատեր հնարավորություն կունենա համապատասխան ենթամենյուի միջոցով թարմացնել կամ ավելացնել անձնական և կոնտակտային տվյալները:

Նախարարության էջ

Նույնականացում անցնելուց հետո յուրաքանչյուր Օգտատիրոջ համար կբացվի ադմինիստրատիվ էջ:

Բացված ադմինիստրատիվ էջից հասանելի կլինեն հետևյալ բաժինները.

Գլխավոր

Այս բաժնում ընդգրկված կլինի ամփոփ տեղեկատվություն համակարգում գրանցած բոլոր կազմակերպությունների և նրանց համար տեղադրված հաշվետվությունների մասին, ինչպես նաև կլինեն հղումներ դեպի առավել մանրամասն տեղեկություններ պարունակող էջեր:

Կազմակերպություններ

Այս բաժնում հասանելի կլինի համակարգում գրանցած կազմակերպությունների ցանկը և նրանց մասին ընդհանուր տեղեկություններ (կազմակերպության անուն, ՀՎՀՀ, հասցե, հեռախոս, կարգավիճակ (ակտիվ/պասիվ), էլ փոստ, և այլն): Կլինի որոնման համակարգ ըստ յուրաքանչյուր նշված դաշտի, ինչպես նաև կլինի ծանուցում/հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն: Հաղորդագրություն ուղարկելու համար անհրաժեշտ կլինի որոնել և ընտրել կազմակերպություն(ներ)ը (կամ ընտրել բոլորը) և համապատասխան կոճակի ընտրությամբ ձևավորել և ուղարկել հաղորդագրությունը:

Համակարգը հնարավորություն կտա ստանալ կազմակերպությունների ցանկը ըստ ընտրված ֆիլտրերի, մասնավորապես՝

- ըստ գրանցման ժամանակաշրջանի
- ըստ հավաստագրերի առկայության
- ըստ գործունեության ոլորտի
- ըստ գործունեության վայրի
- ըստ կարգավիճակի
- այլ

Որոնման արդյունքները հնարավոր կլինի տեսնել աղյուսակի տեսքով, ինչպես նաև ներբեռնել դրանք համակարգչի մեջ կամ տպել:

Էջի վրա որոնման արդյունքում ցուցադրվող յուրաքանչյուր կազմակերպության համար կլինի հղում, որը կբացի տվյալ կազմակերպության էջը՝ նրա մասին առավել մանրամասն տեղեկություններով:

Գրանցել նոր կազմակերպություն

Համակարգը նոր կազմակերպություն գրանցելու հնարավորություն կունենա, որի համար անհրաժեշտ կլինի լրացնել առաջարկվող տվյալները և հաստատել:

Նոր կազմակերպություն գրանցելիս, համապատասխան էջում տվյալները լրացնելուց և հաստատելուց հետո, համապատասխան հայտ կուղարկվի տվյալ աշխատակցի վերադասին, որի վերջնական հաստատումից հետո նոր կազմակերպության մասին տեղեկությունները

կավելացվեն համակարգի տվյալների բազայում, և հասանելի կդառնան տեղեկատվական (գլխավոր) էջից (ՏՀՏ Ռեգիստրում):

Հեռացնել կազմակերպություն

Նախարարության աշխատակիցները հնարավորություն կունենան այս բաժնի միջոցով հեռացնել գրանցված կազմակերպությունները: Հեռացնելու համար անհրաժեշտ կլինի կազմակերպությունների ցանկից ընտրել կազմակերպություն(ներ)ը և համապատասխան կոճակը սեղմելով հեռացնել այդ կազմակերպություն(ներ)ը: Այս գործողությունը նույնպես պետք է հաստատվի աշխատակցի վերադասի կողմից:

Կազմակերպությունը հեռացնելու դեպքում նրա վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կհեռացվի տվյալների բազայից:

Նախարարության աշխատակիցների նախաձեռնությամբ կազմակերպություն հեռացնելու դեպքում ընկերության էլեկտրոնային փոստին և այն գրանցած Օգտատիրոջ էջին կուղարկվի համապատասխան հաղորդագրություն/ծանուցում:

Օգտատերերից ստացված իրենց կազմակերպության հեռացման հայտի հիման վրա գործողություն կատարելուց հետո նույնպես համակարգը ծանուցում կուղարկի համապատասխան էլեկտրոնային հասցեներին կամ Օգտատերերի էջերին:

Փոխել կազմակերպության կարգավիճակը

Ադմինիստրատորները հնարավորություն կունենան այս բաժնի միջոցով փոխել կազմակերպության կարգավիճակը՝ դարձնելով այն *Պասիվ* կամ *Ակտիվ*: Կազմակերպության կարգավիճակը *Պասիվ* դարձնելու դեպքում նրա վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կպահպանվի, բայց այն չի հայտնվի ընթացիկ հաշվետու կազմակերպությունների ցանկում, ինչպես նաև չի ստանա ծանուցումներ:

Այս գործողությունը նույնպես պետք է հաստատվի աշխատակցի վերադասի կողմից:

Հաշվետվություններ

Այս բաժնի միջոցով հնարավոր կլինի ստանալ կազմակերպությունների անվանական հաշվետվությունները, ինչպես նաև կազմել ամփոփ և տարեկան հաշվետվություններ:

Հաշվետվությունները կազմելիս հնարավոր կլինի նշել, թե ո՞ր ժամանակահատվածի, կամ տարվա, կամ ամսվա համար է պետք այն ստանալ:

Հաշվետվությունների մեջ ներառված չափորոշիչները հնարավոր կլինի ֆիլտրել՝ ընտրելով միայն դրանցից մի քանիսը: Եթե ոչ մի ֆիլտր չկիրառվի համակարգը կցուցադրի ամբողջական հաշվետվությունը:

Հաշվետվությունները հասանելի կլինեն նաև ներբեռնելու և/կամ տպելու համար:

Այս բաժնում նույնպես հնարավոր կլինի իրականացնել կազմակերպությունների որոնում, կամ անհրաժեշտության դեպքում համապատասխան հղումով բեռնել կազմակերպության էջը:

Տարեկան հաշվետվությունները կձևավորվեն ծրագրային միջոցներով, որոնք նախ վերանայման և հաստատման համար կուղարկվեն կազմակերպություններին, ապա կհրապարակվեն նախարարության աշխատակիցներին հասանելի բաժնում:

Ծանուցումներ/հայտեր

Այս բաժնում նախարարության աշխատակիցները հնարավորություն կունենան տեսնելու համակարգի կողմից ստացված ծանուցումներն ու հայտերը: Բոլոր ծանուցումների ու հայտերի համար Օգտատերերը նաև էլեկտրոնային փոստով հաղորդագրություններ կստանան:

Այս բաժնի միջոցով հասանելի կլինի նաև կազմակերպությունների կողմից կատարվող փոփոխությունների պատմությունը (ե՞րբ, ո՞րտեղ և ու՞մ կողմից է կատարվել փոփոխությունը): Իսկ հաշվետվությունների մեջ կազմակերպությունների կատարած փոփոխությունները կարտացոլվեն նաև էջի վրա՝ գունային երանգի փոփոխությամբ և նախարարության համապատասխան աշխատակցին կամ աշխատակիցներին ծանուցում ուղարկելու միջոցով:

Օգտատեր/Ադմինիստրատոր

Այս բաժնի միջոցով Օգտատերերը հնարավորություն կունենան փոխելու համակարգ մուտք գործելու համար գրանցված անձնական տվյալները, ինչպես նաև ստանալ Օգնություն համակարգն օգտագործելու վերաբերյալ և կկարողանան դուրս գալ համակարգից:

Համակարգը կունենա նաև հատուկ արտոնությամբ օժտված ադմինիտրատոր, ով կկարողանա ավելացնել կամ հեռացնել Օգտատերերին: Այս ֆունկցիոնալությունը հասանելի կլինի միայն արտոնված Օգտատիրոջը:

Կայքը պետք է նշված տվյալների հիման վրա գրաֆիկներ կառուցելու հնարավորություն ունենա: Ինչպես նաև, պետք է լինի հնարավորություն կազմված հաշվետվությունները, անհրաժեշտ փաստաթղթերը և նորությունները կայքի վրա տեղադրելու համար:

2.3. Կայքի քարտեզ

Նախատեսվում է տեղադրել կայքի քարտեզ, որտեղ կցուցադրվեն բոլոր բաժինները և ենթաբաժինները: Հիմնական նպատակն է կայքը դարձնել ավելի ընթեռնելի որոնողական համակարգերի համար:

3. Հարակից Պահանջներ

3.1. Տեխնիկական պահանջներ

• Կայքի պետք է նախագծվի այնպես, որ այն հնարավոր լինի հետագայում հեշտությամբ ընդլայնել և նոր ֆունկցիոնալություն ավելացնել:

• Բովանդակության ղեկավարման համակարգը պետք է լինի պարզ և հեշտ ղեկավարվող:

• Կայքը պետք է օպտիմալացված լինի որոնողական համակարգերի համար (SEO):

• Յուրաքանչյուր ամիս պետք է ավտոմատ իրականացվի կայքի արխիվացում (back-up):

• Վեբ-կայքը պետք է միացված լինի Google Analytics այցելությունների և հաճախելիության գրանցման համակարգին:

• Տվյալների բազան պետք է նախագծվի օգտագործելով MySQL, իսկ կայքի նախագծումը և իրականացումը պետք է կատարվի օգտագործելով HTML/CSS, Bootstrap, PHP, Javascript, Jquery և այլ անհրաժեշտ ծրագրավորման լեզուների և գործիքների միջոցով:

• Տվյալների բազան պետք է համալրվի օգտագործելով արդեն գոյություն ունեցող տվյալների բազան:

3.2. Անվտանգություն

• Օգտատերերի տվյալների անվտանգությունը համակարգ մուտք գործելու պահին կիրականացվի նույնականացման քարտով մուտք գործելու համար կիրառվող անվտանգության միջոցներով:

• Հաշվետվություններ ու այլ տվյալներ Օգտատերերի համակարգչից սերվեր փոխանցվելու ընթացքում անվտանգության պահպանման նպատակով կներդրվեն ծրագրային լուծումներ, որոնք կկանխեն փոխանցվող տվյալների արտաքին ներգործությամբ

փոփոխումը կամ չարտոնված անձանց կողմից ստանալը/դիտվելը:

• Օգտագործվող և տվյալների բազայում պահվող բոլոր գաղտնաբառերն ու գաղտնի տվյալները կկոդավորվեն տվյալների փոխանցման ժամանակ:

• Ծրագրային ֆայլերը պաշտպանված կլինեն այլ անձանց կողմից փոփոխվելուց:

• Սերվերի վրա պետք է տեղադրված լինի հակավիրուսային ծրագրեր (պետք է ապահովվի Պատվիրատուի կողմից):

• Սերվերը պետք է ապահոված լինի SSL սերտիֆիկատով (պետք է ապահովվի Պատվիրատուի կողմից):

• Սերվերի վրա տեղադրված ծրագրային միջոցները և Օպերացիոն Համակարգը պետք է ժամանակին թարմացվի (պետք է ապահովվի Պատվիրատուի կողմից):

• Որոշակի ժամանակ համակարգը չօգտագործելու դեպքում Օգտատերն ավտոմատ կերպով կլքի համակարգը (logout):

3.3. Համակարգային պահանջներ

Կայքը պետք է հարմարեցված լինի Chrome, Mozilla Firefox, Internet Explorer, Safari և այլ հայտնի զննարկիչներով դիտելու համար: Կայքը պետք է լինի նաև ճկուն՝ բջջային սարքերով դիտելու համար:

Առայժմ կայքն իր ամբողջ ֆունկցիոնալությամբ հասանելի կլինի միայն Windows Օպերացիոն Համակարգի համար, քանի որ նույնականացման քարտը սպասարկող ծրագրային ապահովումը հասանելի է միայն այս համակարգի համար: Հետագայում, ըստ անհրաժեշտության այն կընդլայնվի նաև բջջային սարքերի և այլ Օպերացիոն Համակարգերի միջոցով օգտագործման համար:

Վերոհիշյալ սահմանափակումը տվյալ նախագծի շրջանակներում հնարավոր է շրջանցել միայն համակարգ մուտք գործելու համար նույնականացման այլ տարբերակ մշակելու դեպքում:

3.4. Փաստաթղթային պահանջներ

Ծրագրի մշակման և հանձնման համար ընկերությունը կներկայացնի հետևյալ փաստաթղթերը, որոնք կստուգվեն և կհաստատվեն Պատվիրատուի կողմից.

• արտադրանքի նկարագիրը

• ծրագրային կոդերը (source codes)

• օգտագործողի ձեռնարկ

• համակարգի թողարկման վերաբերյալ նշումներ (release notes)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900018018703
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ
Ք. Երևան, Բաղրամյան 2-րդ նրբանցք 15 տուն
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570036204230100
ՀՎՀՀ 00166341

/ստորագրություն/

Հավելված N 2
« » 2018թ. կնքված
ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/13 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211139/1	ictstat.am կայքի պատրաստում և սպասարկում	-	-	-	1217000	1217000	1217000	2072000	2072000	2072000	3290000	3290000	3290000	3290000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/1
Կենտրոնական Գանձարան
Հ/Հ 900011018
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ
Ք. Երևան,Բաղրամյան 2-րդ նրբանցք 15 տուն
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570026204230100
ՀՎՀՀ 00166341

/ստորագրություն/

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
Ստորագրություն	Ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «10» ապրիլ 2018 թ.**

<<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Դաքեսյանի՝(անձնագիր՝ AK0335877, տրված 2009-07-
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

10,004-ի կողմից) որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *_ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/13* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ
ընկերության անվանումը

ք.Երևան, Բաղրամյան 2-րդ նրբ,15 տ
ընկերության հասցեն

<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

1570026204230100
ընկերության բանկային հաշվեհամարը

00166341
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Վահե Դաքեսյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N**
(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող) ՝ <<Մեգապոլիս Թրեյդ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝՝ <<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1570026204230100

6. Վճարողի ՀՎՀՀ ՝ 00166341

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565518

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12. Գումարը թվերով և բառերով՝ 329000(երեք հարյուր քսանինը հազար)

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանգրի կատարման ապահովում

15. Պայմանագրի ծածկագիրը՝ ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/13

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.